ՄԻՋԻՆ ԽԱՎԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2024.2-21

Հիմնաբառեր. *միջին խավ, եկամուտների մեդիանա, զուտ աշխատավարձ, եկամտային շեմ, հարաբերական մակարդակ*

Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2011 թ. ավարտել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը և 2013 թ. ընդունվել ՀՊՏՀ ասպիրանտուրա: 2017 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2015-2016 թթ. դասավանդել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում: 2016 թ.-ին աշխատանքի է անցել «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2017 թ.-ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնում:

https://orcid.org/0000-0002-6883-455X

Միջին խավն առանցքային նշանակություն ունի տնտեսական և քաղաքական կայունության, մարդկային կապիտալի զարգացման, ժողովրդավարական ինստիտուտների կայացման և արդյունավետ կառավարման համար: Նպատակային և հետևողական սոցիալական քաղաքականության տեսանկյունից, կարևորվում է միջին խավի քանակական գնահատումը:

Այս հոդվածում փորձել ենք գնահատել հայաստանյան միջին խավն ինչպես դրամական, այնպես էլ ոչ դրամական հարթություններում: Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ, ըստ ամենալայն հարաբերական չափումների, միջին խավի մեծությունը «գերագնահատված» է. Հայաստանում միջին խավ է համարվում տնային տնտեսությունների մոտ 46,9%-ը: Մեկ այլ մոտեցմամբ, որը հնարավորություն է տալիս միջին խավը գնահատելու՝ ելնելով աշխատավարձային եկամտից, կրթական մակարդակից և մասնագիտությունից, միջին խավը 28,3% է:

Պետք է նշել, որ միջին խավի քանակական գնահատումը կարևոր նշանակություն ունի բարեկեցության աճին ուղղված կենսունակ քաղաքականության իրականացման կառուցակարգերի ընտրության և ցանկալի արդյունքի ապահովման տեսանկյունից:

Ե՛վ տնտեսական, և՛ քաղաքական կայունության հիմքում բարեկեցիկ անհատն է. լարվածություններն ու տնտեսական ցնցումները սոցիալական դրդապատճառ ունեն: Այս առումով, աղքատության կրճատումը և միջին խավի ընդլայնումը կայունություն են

հաղորդում տնտեսությանը, մինչդեռ աղքատության խորացումն ու միջին խավի «սեղմումը»՝ հանգեցնում ճգնաժամերի:

Մասնագիտական գրականությունում գոյություն ունեն միջին խավի վերաբերյալ տարբեր սահմանումներ: Առավել տարածված մոտեցմամբ՝ միջին խավը մարդկանց սոցիալական խումբ է, որն ունի համեմատաբար կայուն եկամուտ ու կարողանում է բավարարել իր նյութական և ոչ նյութական կարիքները: Հաճախ դա ընկալվում է որպես սոցիալական աստիճանակարգության բարձր և ցածր շերտերի մեջտեղում գտնվող խավ, որը միջին կարգավիճակ ունի եկամուտների, կրթական մակարդակի տեսանկյունից: Այս առումով, միջին խավը, որպես կանոն, դիտարկվում է իբրև «արիստոկրատ» և «բանվորական» խավերի միջև գտնվող մարդկանց խումբ:

Մաքս Վեբերի բնորոշմամբ՝ միջին խավը բաղկացած է մասնագետներից և գործարարներից, որոնք օգնում են հաղթահարել սոցիալական լարվածություններն ու տնտեսական ճգնաժամերը և կայունացնող ազդեցություն ունեն տնտեսության վրա: Միջին խավն իր վրա կրում է ոչ միայն ցածր խավի պայթունավտանգ (հեղափոխական) միտումները, այլև վերին խավի մաքսիմալիստական (օլիգարխիկ) նկրտումները: Ուստի միջին խավը դիտարկվում է որպես մասնագետներից և կառավարիչներից բաղկացած էլիտա (վերնախավ), որը տնտեսական ճգնաժամերի, հեղաշրջումների հանդեպ «իմունիտետ» է ձևավորում[1]:

Տնտեսության ներառական աճի, մարդկային կապիտալի կուտակման և արտադրողականության կայուն աճի ապահովման տեսանկյունից, միջին խավն առանցքային դերակատարություն ունի[2]: Իբրև տնտեսության շարժիչ ուժ՝ դա խթանում է սպառումը, պահանջարկը և ձևավորում որակյալ աշխատուժ[3]: Պատահական չէ, որ բարձր տնտեսական աճ են արձանագրում այն երկրները, որտեղ միջին խավի մասնաբաժինը համեմատաբար ավելի մեծ է: Տնտեսագետներ Հ. Կարասը և Գ. Գերցը, համեմատելով Բրազիլիայի և Հարավային Կորեայի փորձը, եկել են այն եզրահանգման, որ երկու երկրների տնտեսական զարգացման առանձնահատկություններն առավելապես պայմանավորված են այդ երկրներում միջին խավի տարբեր ծավալներով[4]:

Ա. Բեներջին և Է. Դուֆլոն նույնպես հիմնավորում են, որ միջին խավը նպաստում է նորարարությանը, արտադրողականությանը և տնտեսական աճին: Ավելին, միջին խավը կարևորում է մարդկային կապիտալի և խնայողությունների կուտակումը, ինչպես նաև, սպառման առանձնահատկություններից ելնելով, խթանում շուկաների ընդլայնումն ու բազմազանեցումը[5]: Բացի այդ, միջին խավը կրճատում է քաղաքական բևեռացվածությունը, նպաստում արդյունավետ կառավարմանը և ժողովրդավարական ինստիտուտների կայացմանը[6]: Այսինքն՝ միջին խավի «ձեռքում» է սոցիալական առաջընթացի «բանալին»:

Վերոնշյալ բնորոշումներից կարելի է պատկերացում կազմել միջին խավի սոցիալական բնույթի և որակների վերաբերյալ, սակայն խնդիր է առաջանում՝ ինչպես սահմանազատել դա ստորին կամ վերին խավերից: Տնտեսագիտական գրականությունում գոյություն ունեն միջին խավի գնահատման բացարձակ և հարա-

[1] Աղբյուրը՝ A.Tarkhnishvili, L.Tarkhnishvili, Middle Class: Definition, Role and Development, Global journal of human social science, Sociology & Culture, Global Journal Inc., Volume 13, Issue 7 Version 1.0, 2013, p. 3-4, https://globaljournals.org/GJHSS_Volume13/3-Middle-Class-Definition-Role-and-Development.pdf

[2] Աղբյուրը՝ A.V.Banerjee, E.Duflo, What is Middle Class about the Middle Classes around the World?, Journal of Economic Perspectives, Volume 22, Number 2, 2008, page 3, https://pubs.aeaweb.org/doi/pdfplus/10.1257/jep.22.2.3

[3] Աղբյուրը՝ OECD, Under Pressure: The Squeezed Middle Class, OECD Publishing, Paris, 2019, p.16-18, https://www.oecd-ilibrary.org/sites/44c79734-en/index.html?itemId=/content/component/44c79734-en#:~:text=Note%3A%20%E2%80%9CLower%20income%E2%80%9D%20households,two%20times%20the%20national%20median

[4] Աղբյուրը՝ N. Chun, R. Hasan, M. Ulubasoglu, The role of the middle class in economic development: What do cross-country data show, ADB Economics Working Pape Series No. 245, 2011, January, p. 1, https://www.adb.org/sites/default/files/publication/28751/economics-wp245.pdf

[5] Նույն տեղում, էջ 4-6:

[6] Աղբյուրը՝ OECD, Under Pressure: The Squeezed Middle Class, OECD Publishing, Paris, 2019, pages 28-30, https://www.oecd-ilibrary.org/sites/44c79734-en/index.html?itemId=/content/component/44c79734-en#:~:text=Note%3A%20%E2%80%9CLower%20income%E2%80%9D%20households,two%20times%20the%20national%20median

բերական մոտեցումներ՝ ըստ բաշխման տիրույթի, բացարձակ գնողունակության, մեդիանայից և աղքատությունից հեռավորության:

Միջազգային համեմատություններում առավել տարածված է միջին խավի եկամտային/ծախսային շեմի «բացարձակ մակարդակի» սահմանումը: Ըստ այդմ՝ առանձնացվում են բնակչության 5 հիմնական խմբեր. աղքատներ, որոնք գնողունակության համարժեքով մեկ շնչի հաշվով օրական 2 ԱՄՆ դոլարից ցածր եկամուտ ունեն, ինչպես նաև ցածր (2,01-10 ԱՄՆ դոլար), միջինից բարձր (20.01-50 ԱՄՆ դոլար) և բարձր եկամուտ ունեցողներ (ավելի քան 50 ԱՄՆ դոլար): Միջին խավին է պատկանում գնողունակության համարժեքով մեկ շնչի հաշվով օրական 10-20 ԱՄՆ դոլար եկամուտ ունեցող բնակչությունը[7]: Տնտեսագետներ Ա. Բեներջին և Է. Դուֆլոն միջին խավը բնորոշում են որպես գնողունակության համարժեքով օրական 2-10 ԱՄՆ դոլար ծախսող տնային տնտեսություններ[8]: Ասիական զարգացման բանկը ասիական երկրների համար սահմանում է մեկ շնչի հաշվով օրական 2-20 ԱՄՆ դոլար եկամտային շեմը[9]: Լատինական Ամերիկայի և Կարիբյան ծովի երկրների համար Համաշխարհային բանկը, որպես եկամտի նվազագույն շեմ, կիրառում է օրական 10, իսկ որպես առավելագույն շեմ՝ 50 ԱՄՆ դոլարը՝ ճշգրտված գնողունակության համարժեքով:

«Բացարձակ մակարդակի» վերոնշյալ մոտեցումները լայն տարածում ունեն իրենց պարզության շնորհիվ, սակայն նաև քննադատության են ենթարկվում, քանի որ զարգացած և զարգացող երկրներում միջին խավի բնութագրիչները տարբերվում են: Այսպես, ըստ Մ. Ռավալիոնի, օրական 2-13 ԱՄՆ դոլարով ապրող մարդիկ զարգացող երկրներում կարող են պատկանել միջին խավին, սակայն ԱՄՆ-ում՝ համարվել աղքատ: Հետևաբար՝ տնտեսագիտական գրականությունում (Ն. Բիրդսալ, Կ. Գրեյհամ, Ս. Պետինատո) առավել տարածված են միջին խավի գնահատման «հարաբերական մակարդակի» մոտեցումները, երբ, երկրի եկամտի բաշխմանը համապատասխան, սահմանվում են միջին խավի ստորին և վերին շեմերը: Այսպես՝ դիտարկվում է եկամուտների մեդիանայի (միջնաթվի) 75-125%-ը: Մեդիանայի 50%-ից քիչ եկամուտ ունեցողները համարվում են աղքատ, իսկ 50-75% եկամտի դեպքում՝ ցածր եկամուտ ունեցողներ: Ըստ այդմ, որպես միջին խավ, դիտարկվում է այն մարդկանց խումբը, որը տնօրինում է մեդիանայի 75-125%-ի չափով եկամտի[10]:

ՏՀԶԿ սահմանման համաձայն՝ միջին խավին են պատկանում այն տնային տնտեսությունները, որոնց եկամուտները մեդիանայի 75-200%-ն են: Միջին խավն էլ, իր հերթին, բաժանվում է երեք խմբի՝ միջինից ցածր (մեդիանայի 75-100%), միջին (մեդիանայի 100-150%) և միջինից բարձր (մեդիանայի 150-200%) եկամուտ ունեցող տնային տնտեսությունների: Այս մոտեցմամբ հաշվարկվող եկամտային շեմերը ՏՀԶԿ երկրներում զգալիորեն տարբերվում են: Այսպես՝ Մեքսիկայում միջին խավի տարեկան եկամուտը 2019 թ. կազմել է 3800-10000, իսկ Լյուքսեմբուրգում՝ 26500-70600 ԱՄՆ դոլար: Սակայն, ՏՀԶԿ երկրներից որևէ մեկում միջին խավին պատկանող տնային տնտեսությունները հիմնականում այդպիսին են համարվում նաև ՏՀԶԿ այլ երկրներում[11]:

Բրուքինգսի ինստիտուտի մոտեցման համաձայն՝ որպես միջին խավ է դիտարկ-

[7] Աղբյուրը՝ R.Kochhar, A Global Middle Class Is More Promise than Reality: From 2001 to 2011, Nearly 700 Million Step Out of Poverty, but Most Only Barely, Pew Research Center, Washington, D.C., 2015, July, p. 2, https://www.pewresearch.org/wp-content/uploads/sites/2/2015/08/global-middle-class-report_8-12-15-final.pdf

[8] Աղբյուրը՝ A.B. Atkinson, A. Brandolini, On The identification of the "middle class", Society for the Study of Economic Inequality, September 2011, page 17, http://www.ecineq.org/milano/WP/ECINEQ2011-217.pdf

[9] Աղբյուրը՝ A. Pishnyak, N. Khalina, E. Nazarbaeva, The Paths from Middle Class: Evaluation of the Poverty Risks for the Russian Middle Class, Journal of Economic Sociology, Vol. 24, No 2, March 2023, p. 183, https://cyberleninka.ru/article/n/the-paths-from-middle-class-evaluation-of-the-poverty-risks-for-the-russian-middle-class/viewer

[10] Աղբյուրը՝ A.V.Banerjee, E.Duflo, What is Middle Class about the Middle Classes around the World?, Journal of Economic Perspectives, Volume 22, Number 2, 2008, page 7, https://pubs.aeaweb.org/doi/pdfplus/10.1257/jep.22.2.3

[11] Աղբյուրը՝ OECD, Under Pressure: The Squeezed Middle Class, OECD Publishing, Paris, 2019, p. 19, https://www.oecd-ilibrary.org/sites/44c79734-en/index.html?itemId=/content/component/44c79734-en#:~:text=Note%3A%20%E2%80%9CLower%20income%E2%80%9D%20households,two%20times%20the%20national%20median



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ԱՄՆ-ի միջին խավի տեսակարար կշիռը, 1971 և 2021 թթ.[12]

վում բնակչության այն խումբը, որը տնօրինում է երկրորդ և չորրորդ քվարտիլների եկամուտների: Ըստ էության, այս դեպքում դիտարկվում է եկամտի այն մասը, որը տնօրինվում է բնակչության միջին 60%-ի կողմից: Չնայած դա հեշտ է հաշվարկել, սակայն այստեղ միջին խավի մասնաբաժինը միշտ մնում է անփոփոխ՝ կազմելով 60%[13]:

Ըստ գնահատման վերոնշյալ մոտեցումների՝ միջին խավն առավելապես բնութագրվում է դրամական տեսանկյունից՝ դիտակետից դուրս թողնելով ոչ դրամական այնպիսի գործոններ, ինչպիսիք են կրթական մակարդակը և մասնագիտությունը: Վերջիններս անմիջականորեն կապված են միջին խավի սոցիալական բնույթի հետ և ապահովում են նրա հոմոգենությունը (համասեռությունը): Այս մասին անդրադարձ կա ռուս տնտեսագետ Ն. Տիխոնովի աշխատություններում, որտեղ, որպես միջին խավի հիմնական բնութագրիչներ, վերջինս դիտարկում է ինչպես եկամուտները (մեդիանայի 125%-ից բարձր՝ առանց վերին շեմ սահմանելու), այնպես էլ մասնագիտությունը և կրթական մակարդակը: Նմանօրինակ մոտեցումը հնարավորություն է տալիս ոչ միայն գնահատելու միջին խավը, այլև բացահայտելու դրա կառուցվածքը, մասնավորապես՝ տնային տնտեսությունների առանձին խմբի, որն ունի միջին խավի բնութագրիչների մի մասը: Այսպիսով, ընդլայնելով վերլուծության շրջանակը, հնարավորություն է ընձեռվում նաև կենտրոնանալու բնակչության այն խմբի վրա, որը կարող է հանդիսանալ միջին խավի ընդլայնման «դռնոր»:

Հարկ է նշել, որ թեև վերջին տարիների աշխարհաքաղաքական զարգացումները նպաստել են բնակչության կենսապայմանների բարելավմանը, սակայն միջին խավի դիրքերը նկատելիորեն թուլացել են: ԱՄՆ-ի Պյու հետազոտական կենտրոնի գնահատումների համաձայն՝ միջին խավը (չափահասներ, որոնք պատկանում են միջին խավի տնային տնտեսություններին) վերջին հինգ տասնամյակում կրճատվել է՝ 1971 թ. 61%-ից 2021 թ. հասնելով 50%-ի (գծապատկեր 1)[14]:

Պատկերը նույնական է նաև ՏՀԶԿ երկրներում, որտեղ 1980-ականների համեմատությամբ 2010-ականներին միջին խավի մասնաբաժինը 17 երկրից 9-ում 3%-ով

[12] Աղբյուրը՝ How the American middle class has changed in the past five decades, Pew Research Center, 2022, https://www.pewresearch.org/short-reads/2022/04/20/how-the-american-middle-class-has-changed-in-the-past-five-decades/

[13] Աղբյուրը՝ A.B. Atkinson, A. Brandolini, On The identification of the "middle class", Society for the Study of Economic Inequality, September 2011, pages 3-4, http://www.ecineq.org/milano/WP/ECINEQ2011-217.pdf

[14] Աղբյուրը՝ How the American middle class has changed in the past five decades, Pew Research Center, 2022, https://www.pewresearch.org/short-reads/2022/04/20/how-the-american-middle-class-has-changed-in-the-past-five-decades/

կրճատվել է: Ընդհանուր առմամբ, ՏՀԶԿ երկրներում միջին եկամուտ ունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը 64%-ից նվազել է մինչև 61%[15]:

Պյու հետազոտական կենտրոնի գնահատումների համաձայն՝ բնակչության կենսամակարդակի բարձրացումն առավելապես պայմանավորված է բարձր եկամուտ ունեցող բնակչության եկամուտների աճով, փոխարենը՝ միջին խավի եկամուտները նշանակալիորեն կրճատվել են վերջին տասնամյակում՝ նույնիսկ ավելի արագորեն, քան միջին խավի մասնաբաժինը: Այսպես՝ ԱՄՆ-ում բարձր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների եկամուտների մասնաբաժինը 1970 թ. 29%-ից անընդհատ կերպով աճել է և 2020 թ. կազմել 42%, մինչդեռ միջին խավին բաժին ընկնող եկամուտների տեսակարար կշիռը 1970 թ. 62%-ից շարունակաբար նվազել է և 2020 թ. կազմել 50%[16]: Վերոնշյալ գնահատականները յուրօրինակ ցուցիչներ են, որոնք վկայում են, որ բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացումը առավելապես ուղեկցվել է սոցիալական բևեռացվածության աճով, ինչպես նաև միջին խավի ծավալների և եկամուտների կրճատմամբ:

Անդրադառնալով Հայաստանին՝ հարկ է նշել, որ միջին խավի բարեկեցության աճն ու աղքատության կրճատումը ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրում համարվում են տնտեսական քաղաքականության նպատակներից[17]: Այս առումով, միջին խավի կենսապայմանների բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման ու իրականացման կարևորագույն բաղադրիչը միջին խավի քանակական գնահատումն է, որն առանցքային դերակատարություն ունի տնտեսական քաղաքականության ուղենիշների հստակեցման, կառուցակարգերի ընտրության և ցանկալի արդյունքի ապահովման համար:

Ստորև փորձել ենք գնահատել Հայաստանում միջին խավը՝ կիրառելով ինչպես դրամական, այնպես էլ ոչ դրամական մոտեցումներ: Մասնավորապես՝ ՏՀԶԿ դրամական հարաբերական մակարդակի մեթոդաբանությամբ հաշվարկները կատարել ենք ՀՀ վիճակագրական կոմիտեի «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության միկրոտվյալների բազայի» 2022 թ. տվյալների հիման վրա՝ տնային տնտեսությունների 176000 դրամ աշխատավարձային մեդիանայի համար: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ միջին խավին են պատկանում այն տնային տնտեսությունները, որոնց անդամների անվանական աշխատավարձն ամսական կազ-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Տնային տնտեսությունների եկամտային խմբերի սահմանները և տեսակարար կշիռը, 2022 թ.[18]

Մեդիանայի նկատմամբ, %	Տնային տնտեսությունների աշխատավարձային եկամուտները, ՀՀ դրամ	Մեկ աշխատողի հաշվով աշխատավարձային եկամուտները, ՀՀ դրամ	Տեսակարար կշիռը, %
<50%	Մինչև 88000 դրամ	Մինչև 56410 դրամ	20,4
50-75%	88000-132000 դրամ	56410-84615 դրամ	17.2
75-100%	132000-176000 դրամ	84615-112820 դրամ	12.4
100-150%	176000-264000 դրամ	112820-169230 դրամ	20.6
150-200%	264000-352000 դրամ	169230-225641 դրամ	13.9
>200%	352000 դրամից ավելի	225641 դրամից ավելի	15.5

[15] Աղբյուրը՝ OECD, Under Pressure: The Squeezed Middle Class, OECD Publishing, Paris, 2019, page 19, https://www.oecd-ilibrary.org/sites/44c79734-en/index.html?itemId=/content/component/44c79734-en#:~:text=Note%3A%20%E2%80%9CLower%20income%E2%80%9D%20households,two%20times%20the%20national%20median

[16] Աղբյուրը՝ How the American middle class has changed in the past five decades, Pew Research Center, https://www.pewresearch.org/short-reads/2022/04/20/how-the-american-middle-class-has-changed-in-the-past-five-decades/

[17] Աղբյուրը՝ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, էջ 22, https://www.gov.am/files/docs/4586.pdf

[18] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված միկրոտվյալների բազայի» հիման վրա, https://armstat.am/

մում է 132000-352000 դրամ: Ընդ որում, միջինից ցածր (մեդիանայի 75-100%-ը) խավի մեջ ներառվում են 132000-176000 դրամ, միջինում (մեդիանայի 100-150%-ը)՝ 176000-264000 դրամ և միջինից բարձրի մեջ (մեդիանայի 150-200%-ը)՝ 264000-352000 դրամ աշխատավարձային եկամուտ ունեցող տնային տնտեսությունները: Հաշվի առնելով, որ տնային տնտեսություններում աշխատավարձ ստացողների միջին քանակը 1,56 է, ապա հարաբերական ամենալայն գնահատականներով միջին խավին են պատկանում ամսական 84615-225641 դրամ անվանական աշխատավարձ ստացող աշխատողները: Այս մոտեցմամբ՝ աշխատավարձային եկամուտ ունեցող տնային տնտեսությունների շուրջ 46.9%-ը համարվում է միջին խավ, ընդ որում, միջինից ցածր խմբում ընդգրկված են աշխատողների շուրջ 12,4%-ը, միջինից բարձր խմբում՝ 13,9%-ը, իսկ միջինը կազմում է 20,6%-ը (աղյուսակ 1):

Հարկ է նշել, որ եթե նմանատիպ մոտեցումը կիրառենք ոչ թե աշխատավարձային եկամտի, այլ ընդհանուր եկամուտների նկատմամբ, ապա պատկերը գրեթե նույնական է (44,7%): Այնուհանդերձ, այս ցուցանիշը միջին խավի առավել «գերագնահատված» մեծությունն է, և արդյունքում միջին խավում են հայտնվում տնային տնտեսությունների որոշ խմբեր, որոնք, ըստ էության, միջին խավ չեն համարվում:

Հարաբերական ամենանեղ գնահատականներով, երբ հաշվի ենք առնում աշխատավարձային մեդիանայի 75-125%-ը, միջին եկամուտ է համարվում 132000-220000 դրամ կամ մեկ աշխատողի հաշվով 84615-141025 դրամ անվանական աշխատավարձը: Այս մոտեցմամբ՝ միջին խավն ընդամենը 24,7% է:

Պատկերը փոխվում է, երբ հաշվարկները կատարում ենք միջին խավի գնահատման մեկ այլ մոտեցմամբ, որը մշակել է ռուս տնտեսագետ Ն. Տիխոնովը: Վերջինս միջին խավը դիտարկում է ինչպես դրամական, այնպես էլ ոչ դրամական հարթություններում՝ կրթական մակարդակի և մասնագիտության հիման վրա: Կրթական մակարդակը գնահատելիս, որպես միջին խավ, դիտարկվել են բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտուրայի կրթական մակարդակ, ինչպես նաև նախամասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթություն ունեցողները: Մասնագիտական հարթությունում միջին խավին պատկանելու հիմնական սկզբունքը ISCO-88 դասակարգչով 1-4 մասնագիտություններն են՝ ղեկավարներ՝ օրենսդիր, գործադիր, դատական, ՏԻՄ, կազմակերպությունների, քաղաքական և հասարակական միավորումների, բարձր որակավորման մասնագետներ, միջին որակավորման մասնագետներ և գրասենյակների ծառայողներ:

Վերոնշյալ մոտեցմամբ հաշվարկների համար օգտագործել ենք ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած «Աշխատուժի հետազոտության անվանազերծված միկրոտվյալների բազայի» 2022 թ. տվյալները: Գնահատումների համար հարաբերական մակարդակները սահմանվել են ըստ հարկումից հետո (առձեռն ստացված) եկամտի կամ զուտ (մաքուր) աշխատավարձի մեդիանայի:

2022 թ. զուտ (մաքուր) աշխատավարձի մեդիանան կազմել է 80000 դրամ: Եթե որպես ստորին սահման նշում ենք զուտ (մաքուր) աշխատավարձի մեդիանայի 125%-ը (առանց վերին սահմանը նշելու), ապա միջին խավի տեսակարար կշիռը 42,9% է: Եթե որպես չափանիշ՝ զուտ (մաքուր) աշխատավարձի մեդիանայի 125%-ի հետ միասին դիտարկենք նաև մասնագիտությունը, ապա միջին խավը 31.1% է: Բոլոր երեք գնահատականներով միջին խավի մասնաբաժինը 28,3% է (ներառում է նաև նախամասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթական մակարդակները, սակայն եթե դիտարկում ենք միայն բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտուրայի կրթական մակարդակը՝ 23,2%):

Այսպիսով՝ տնտեսության ներառական աճի տեսլականը խարսխված է միջին խավի ծավալների և բարեկեցության աճի վրա, որը և՛ տնտեսական, և՛ քաղաքական կայունություն է հաղորդում տնտեսությանը: Այս առումով, միջին խավի ընդլայնմանն ուղղված կենսունակ քաղաքակա-

նության մշակումն ու հետևողական իրագործումը պահանջում են համապատասխան քանակական գնահատում, որն առանցքային դերակատարություն ունի բարեփոխումների խորացման հնարավորությունների վերհանման, հիմնախնդիրների բացահայտման, ինչպես նաև պետական նպատակային քաղաքականության կենսագործման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատուժի հետազոտության անվանազերծված միկրոտվյալների բազա, ՀՀ վիճակագրական կոմիտե, https://armstat.am/am/?nid=212
2. ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, https://www.gov.am/files/docs/4586.pdf
3. Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված միկրոտվյալների բազա, ՀՀ վիճակագրական կոմիտե, https://armstat.am/en/?nid=205
4. Pishnyak A., Khalina N., Nazarbaeva E., The Paths from Middle Class: Evaluation of the Poverty Risks for the Russian Middle Class, Journal of Economic Sociology, Vol. 24, No 2, March 2023, https://cyberleninka.ru/article/n/the-paths-from-middle-class-evaluation-of-the-poverty-risks-for-the-russian-middle-class/viewer
5. A.B. Atkinson, A. Brandolini, On The identification of the “middle class”, Society for the Study of Economic Inequality, September 2011, http://www.ecineq.org/milano/WP/ECINEQ2011-217.pdf
6. A.Tarkhnishvili, L.Tarkhnishvili, Middle Class: Definition, Role and Development, Global journal of human social science, Sociology & Culture, Global Journal Inc., Volume 13, Issue 7 Version 1.0, 2013, https://globaljournals.org/GJHSS_Volume13/3-Middle-Class-Definition-Role-and-Development.pdf
7. A.V.Banerjee, E.Duflo, What is Middle Class about the Middle Classes around the World?, Journal of Economic Perspectives, Volume 22, Number 2, 2008, https://pubs.aeaweb.org/doi/pdfplus/10.1257/jep.22.2.3
8. How the American middle class has changed in the past five decades, Pew Research Center, 2022, https://www.pewresearch.org/short-reads/2022/04/20/how-the-american-middle-class-has-changed-in-the-past-five-decades/
9. N. Chun, R. Hasan, M. Ulubasoglu, The role of the middle class in economic development: What do cross-country data show, ADB Economics Working Pape Series No. 245, 2011, January, https://www.adb.org/sites/default/files/publication/28751/economics-wp245.pdf
10. OECD, Under Pressure: The Squeezed Middle Class, OECD Publishing, Paris, 2019, https://www.oecd-ilibrary.org/sites/44c79734-en/index.html?itemId=/content/component/44c79734-en#:~:text=Note%3A%20%E2%80%9CLower%20income%E2%80%9D%20households,two%20times%20the%20national%20median
11. R.Kochhar, A Global Middle Class Is More Promise than Reality: From 2001 to 2011, Nearly 700 Million Step Out of Poverty, but Most Only Barely, Pew Research Center, Washington, D.C., 2015, July, https://www.pewresearch.org/wp-content/uploads/sites/2/2015/08/global-middle-class-report_8-12-15-final.pdf

Ани ХАЧАТРЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА

ПРОБЛЕМЫ РАСЧЕТА СРЕДНЕГО КЛАССА В АРМЕНИИ

Средний класс играет центральную роль в экономической и политической стабильности, развитии человеческого капитала, демократических институтов и эффективном управлении. Количественная оценка среднего класса играет важную роль с точки зрения целевой и последовательной социальной политики. В этой статье мы попытались оценить средний класс в Армении как с денежной, так и с неденежной точки зрения. Результаты проведенного анализа показывают, что по самым широким относительным оценкам численность среднего класса «завышена» и в Армении к среднему классу относятся около 46,9% домохозяйств.

При другом подходе, позволяющем оценить средний класс по заработной плате, уровню образования и профессии, средний класс составил 28,3%. В этом смысле количественная оценка среднего класса имеет большое значение с точки зрения выбора механизмов реализации жизнеспособной политики, направленной на повышение благосостояния и обеспечение желаемых результатов.

Ключевые слова: *средний класс, медианный доход, чистая заработная плата, порог дохода, относительный уровень*

Ani KHACHATRYAN
Senior researcher at «Amberd» Research center, ASUE, PhD in Economics

SOCIAL POLICY

ISSUES OF MEASURING THE MIDDLE CLASS IN ARMENIA

The middle class plays an essential role in economic and political stability, the development of human capital, democratic institutions, and effective governance. Quantitative assessment of the middle class is necessary for targeted and consistent social policy. In this paper, we have tried to evaluate the middle class in Armenia from both monetary and non-monetary perspectives. The results of our analysis show that, according to the broadest relative estimates, the middle class in Armenia is "overestimated" and constitutes about 46.9% of households.

Another approach that estimates the middle class based on salary, education, and profession, indicates that the share of middle class is 28.3%. In this context, the quantitative assessment of the middle class is vital for choosing the mechanisms to implement a viable policy aimed at increasing welfare and ensuring the desired results.

Keywords: *middle class, median income, net wage, income threshold, relative level*